



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԲԺԿ. ՎԱՀԱՆ ԱՐՄԵՐՈՒԽԻ

ԲԺԿԻ ԶՐՈՅՑՑՆԵՐ № 8

ՆՈՐԱԹԻՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ

ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1154.



ԹԻՖԼԻԶ

Յաւարանի պատյան Հրատ. բնկ. || Տիպոգրաֆія Груз. Изд. Т-ва
1902

22 FEB 2013

0116 -
0290 1072178
 28/2/138

846 610 18-ԱՐ 422
ԲԺԿ. ՎԱՀԱՆ ԱՐՄՐՈՒԽԻ
ԲԺԿԻ ԶՐՈՅՑՑՆԵՐ Ն 8
613.95 Ա-88

ՆՈՐԱՆԴԻՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1003
0866
6



ԹԻՖԼԻԶ
Տպարան Վրաց Հրատ. Ընկ. || Տիպոգրաֆիա Груз. Изд. Т—ва
1902



Дозволено цензурою. Тифлисъ, 2 октября 1902 года.

Ամենքը դիտեն, թէ որշափ երեխաներ են կոտորվում ծնողների մեղեց կամ տգիտութիւնից:

Նորածին երեխան մի նոր ծիլ է, որը պէտք է խնամել, թէ չէ նա կը թառամի, կը չորանայ:

Նա մօր արգանդում տաք ջրի մէջ էր ապրում, — այժմ գուրս է եկել օդի մէջ, և այդ օդը շատ աւելի պաղ է, քան արգանդի ջուրը:

Նա մնունդ էր առնում մօր արիւնից, այժմ ինքը պիտի կուլ տայ ու մարսի իր մնունդը:

Նա անշունչ էր, թոքերը դատարկ, այժմ պիտի շունչ առնի, այսինքն պէտք է օդով լցնի իր դատարկ թոքերը:

Վերջապէս նրա աչքերը խուփ էին, — նա մթի մէջ էր ապրում, այժմ բաց է անում աչքերն ու նայում է արեին:

Ահագին է այս յանկարձակի փոփութեան ազդեցութիւնը դեռակազմ նորածնի կազմուածքի վրա և մեծ պէտք է լինի ծնողների զգուշութիւններն ու խընամքը, որպէսզի այդ փոքր բողբոջը չվնասուի:

Երեխանները յաճախ ուղղակի մեռած են ծնվում, յաճախ էլ իրանց հետ բերում են այնպիսի արատներ ու հիւանդութիւններ, որ շատերը ծնուելու հէնց առաջին օրերում մեռնում են:

Բազմատեսակ են լինում այդ հիւանդութիւնները: Մենք այս գրքոյիկ մէջ առաջ ենք բերում ոչ բոլորը, այլ այնպիսինները, որոնք ամենից յաճախ են պատահում:

Ի՞նչ են այս փոքրիկ էակների հիւանդութիւնների պատճառները:

Նրանք շատ զանազան են: Բայց մեծ մասամբ իրանք ծնողներն են մեղաւոր:

Ամեն տարի աշխարհիս մէջ հարիւր հազարներով երեխաններ են փչանում հէնց այն պատճառով, որ ծնողներն իրանք հիւանդ են եղել:

Երեք սոսկալի ախտ կայ, որոնք լա-

փում են մարդկութիւնը, որոնք ընտանիքի, սերունդների, մի ամբողջ ցեղի անբախտութեան պատճառ են դառնում:

Դրանք են. վեներական ախտերը (սիֆիլիս կամ վատ ցաւը), թոքախտը և արբեցողութիւնը (ալկօհոլիզմ):

Այս ախտերով վարակուած ծնողներից կամ երեխայ չի ծնվում կամ եթէ ծնվում էլ է, հիւանդու ու ապրելու անընդունակ է լինում:

Հետեւաբար հիւանդու ու արատաւոր մարդիկ երբէք չպէտք է ամուսնանան առանց բժշկի խորհրդի:

Վ. Արծրունի

Նոյեմ. 1902 թ.

Թիֆլիզ.

ՆՈՐԱԾԻՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ.

Ա.

ՆՈՐԱԾՆԻ ԽԵՂԴՈՒԱԾՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՇՆԶԱՀԵՂ-
ԶՈՒԹԻՒՆ

Երբեմն երեխան ծնվում է կիսամեռ,
այսինքն համարեա անշունչ Աշխարհ տես-
նելիս, նա չի ճշում, կարծես ուշաթափ է
եղած։ Նրա մաշկը մուգ-կապոյտ կամ մե-
ռելային գոյն ունի։ Ծնչառութիւնը համա-
րեա բոլորովին դադարած է, կամ երբեմ-
նապէս միայն խռպոտ շունչ է քաշում։ Երե-
խայի աչքերը խփած են մնում, մարմինը,
անդամներն անշարժ ու սառած։ Ներքեկի
ծնօտը կախ ընկած, աչքերը բբերից դուրս
պլծած, լեզուն ուռած ու բերանից դուրս
եկած։ Կենդանութեան միակ նշանը նրա
սրտիկի թոյլ և անկանոն բաբախումն է,
որը կը զգաք, եթէ ձեր ականջը կը ծըին
դնէք։

Այս գրութիւնը կոչվում է նոր ած ինչ-
ների խեղդուածութիւն կամ շնչա-
հեղձութիւն. նա յայտնի է նոյնպէս
կեղծ մահ կամ կարծեցեալ մահ ա-
նունով:

Խեղդուածութիւնը կարող է միքա-
նի աստիճաններ ունենալ: Նա հետեանք
է առհասարակ ծանր բերքին, երբ եր-
կունքը երկար է տեել, երբ մանկան դիր-
քը անկանոն է եղել (ստերի կամ ուսի
դիրք), կամ երբ ծննդկանի ջրերը ժամա-
նակից առաջ են բացուել: Այս պէպերում
երեխան, դեռ մօր արգանդից դուրս չեկած,
միքանի անդամ փորձ է անում օդ ներս
շնչելու, բայց օդի փոխարէն (կամ օդի հետ
միասին) արգանդի հեղուկներն են լցվում
թոքերը *):

Ի՞նչ պէտք է անել այդ պէպեում:


Ամենից առաջ պէտք է մատը մի փա-
փուկ բարակ շոր փաթաթել և նրանով
բերանի մէջ հաւաքուած լորձունքը մաքրել:
Յետոյ, եթէ երեխան չի կենդանանում,

*) Երբեմն արգանդի միջից լսվում է դեռ չծնած ե-
րեխակի նուազ ճիշը. այս նշան է, որ նա ական է շըն-
չել: Այս ձայնին ժողովուրդը առանձին նշանակութիւն է
տալիս, որ նա, ինչպէս տեսնում էք, չունի:

պէտք է իսկոյն արուեստական շնչա-
ռութիւն առաջ բերել:

Ամեն միջոցներից յարմարագոյնը հե-
տեւեալն է.

Պորտը շուտով կապելուց ու կտրելուց յե-
տոյ, երեխային պառկեցնում են մէջքի վրա,
բռնում են երկու ձեռով այնպէս որ բութ
մատը թերի վրայով կուրծքը սեղ-
մի, ցուցամատը գրկի
թևատակերը, իսկ մը-
նացած մատերը գըր-
կեն թիակները (տես
նկ. 1): Այսպէս բըռ-
նած երեխային բար-
ձրացնում են և գլխի
վրա կախ գցում, որի
ժամանակ երեխայի
ոտերը ծալվում են
փորիկի վրա և բերա-
նից ու քթից դուրս
են թափվում կուլ նկ. 1.
տուած լորձունքն ու



հեղուկը (տես նկ. 2): Մի երկու վայր-
կեան այսպէս վեր բռնելուց յետոյ
նոյն ձեռով իջեցնում են մինչև գե-
տին: Այս միջոցին կուրծքը լայնանում է և

Երեխան սկսում է շնչել։ Այս բարձրացնումն ու ցածացնումը կրկնվում է 8—10 անգամ, որից յետոյ երեխային դնում են տաք լողարան։ Այս միջոցը պէտք է կրկնել մինչև որ երեխան ճիշ արձակի, աչքերը բանայ և սկսի ազատ խոր շնչել։ Առհասարակ 20—30րոպէ հարկաւոր է լինում դրա համար։

Սակայն կարող է պատահել որ միքանի ըոպէ, նոյնիսկ միքանի ժամ երեխան կարծես լաւ շնչում է ու յանկարծ նորից ընկնում

է ուշաթափութեան մէջ։ Այս դէպքում ի հարկէ նորից պէտք է կրկնել ցնցելոց։ Առհասարակ չպէտք է գլուխ կորցնել, շփոթուել, այլ պէտք է սառնասիրտ մնալ և տոկունութիւնով առաջ բերել արուեստական շնչատւութիւնը։

Եթէ մասկի, բերանի ու քի բաղանք-



Նկ. 2.

ները դեռ բոլորովին չեն կորցրած իրանց զգացողութիւնը (ինչպէս այդ տեղի ունի ծանր խեղդուածութեան մէջ *), պէտք է աշխատել գրգռել նրանց։ Դրա համար, բերանի լորձունքները մաքրելուց յետոյ (ինչպէս ցոյց ենք տուել միքիչ առաջ), երեխայի երեսին ու մարմնին սառը ջուր պէտք է սրսկէք, կամ փոփոխակի տաք ու սառը լողարանների (վաննաների) մէջ դնէք, մարմինը փափուկ քաթանով շփէք, բիմքը մատով տրորէք, փետուրով քիթը խուտուտ տաք։ Այս բոլորը կարելի է ի հարկէ միաժամանակ անել։

Եթէ տեսնէք, որ այս միջոցներով 2—3 րոպէից յետոյ երեխան կենդանութեան նշաններ չի ցոյց տալիս, փորձեցէք հետեւեալ հեշտ միջոցը։

Պառկեցրէք մի բարձի վրա երեսնի վայր, այնպէս որ գլխիկը բարձից կախընկնի. բռնեցէք ոտերն ու մարմնիկը և վեր բարձրացրէք,

*) Եթէ մատով քիմքը քորելիս, երեխան կուլ տալու կամ փսխելու շարժումներ է անում, ինչպէս նաև մարմնին սառը ջուր սրսկելիս, այդ նշանակում է, թէ խեղդուածութիւնը բերել է։ Հակառակ դէպքում էր բրեք երեխան այդ զրգութեանին անշարժ է մնում, նա ծանր է։

այնպէս որ գլխից բարձր լինեն
ու միքանի ակնթարթ (վայրկեան)՝
այդպէս պահեցէք։ Այս գործողութեան
նպատակն է սեղմել փորն ու կուրծը, որ
լորձունքները դուրս նետուեն։ Այնուհետեւ
շուռա տուէք մէջըի վրա, կանգ-
նեցրէք գլխավէր և ու արմունկնե-
րից բռնելով, սեղմեցէք թե իկները
կրծըին (նպատակն է կողերը սեղ-
մելով դուրս քշել թոքերի միջի
օդը)։ Երբորդ դործողութիւնն է
թերերը բարձրացնելը (երեխան
պառկած է մնում մէջըի վրա),
որից կուրծըը լայնանում է և դըր-
սի օդը ուժով լցվում է թոքերը։

Այս գործողութիւնը (թերերը կրծըին
սեղմելն ու վեր բարձրացնելը) կրկնվում է
միքանի անգամ, մինչև երեխայի չնչառու-
թեան բացուելը։

Նկարգրածս այս վերջին ձեւը այն առա-
ւելութիւնն ունի, որ հեշտ գործադրելի է
և կարող է կատարուել տաք վաննայի մէջ էլ։

Հիմի տեսնենք, թէ որքան ժամանակ
պիտի շարունակել կենդանացման գործերը։

Յաճախ միքանի ըստէ այսպէս հարե-
լուց յետոյ յուսահատվում են, երեխային

մեռած են համարում ու ձեռք վեր-
ցնում նրանից։ Երբեմն էլ, տեսնելով, որ
նա միերկու անգամ շունչ բաշեց, կամ
ձշաց, փրկած են համարում ու դադարե-
ցնում արհեստական շնչառութիւնը, և խեղ-
ճը շուտով կրկին դադարում է շնչելուց։

Նախ չպէտք է յուսահատուել,
որովհետեւ երբեմն առերես բոլո-
րովին անշնչացած երեխաներն ան-
գամ կենդանանում են, հետեա-
բար պէտք է տոկունքութեամբ շա-
րունակել, քանի գեռ սիրտը չէ դա-
դարել բարախելուց։ Երկրորդ,
չպէտք է մոռանալ, որ մի երկու
անգամ ճիչ արձակելը կամ միքանի
անգամ շունչ առնելը դեռ ապա-
ցոյց չէ, որ երեխան կենդանացած
է։ Երեխային փրկած կարելի է համարել այն
ժամանակ միայն, երբ շնչառութիւնը ազատ
է, սիրտը կանոնաւոր ու առողջ բարախում
է, երբ դէմքը վարդագոյն է և աչքերը
բաց են, երբ մաշկը դիւրզգայուն է դառել։

Բ

ԳԼԽԻ ԱՐՆԱԿՈՅՑ (արևուռուց)

Երբոր մօր կոնքը նեղ է, երեխան դժուար է ծնվում, և մօր երկունքներից նրա գլուխը սեղմվում է ոսկրների մէջ ու իր ձեւը փոխում։ Երեխան ծնվում է այլաշ կերպուած գլխով։

Նոյն սեղմումից նորածնի գլխի կաշու տակը հաւաքվում է շատ արիւն և կաղմում է ուռուցք, մեծ կամ փոքր ուռուցք։ Եթէ մարդ մատով կամացիկ սեղմի այդ ուռուցքը, կը զգայ, որ նա լցուած է հեղուկով (արիւնով),

Երբեմն այդ արնակոյցը միքանի օրուայ մէջ անհետանում է, բայց յաճախ նա շատ երկար ամիսներ է տևում և անհանգստութիւն պատճառում ծնողներին։

Ճշմարիտ է, երբեմն արիւնը չի ծծվում, այլ թարախ է գառնում ու հարկ է լինում ծակել, բայց ընդհանրապէս ուռուցքն ինքն իրան հալվում-կորչում է։ Ոչինչ չպէտք է անել, այլ սպասել, իսկ երբ երեխան չերմ կ'ունենայ, պէտք է բժշկի դիմել և առանց նրան ոչինչ չանել։

Գ

ԱԶՔԵՐԻ ԹԱՐԱԽԱՅԻՆ ԲՈՐԲՈՔՈՒՄՆ

Այս մի վերին աստիճանի վտանգաւոր ցաւ է, որովհետեւ յաճախ կուրացնում է երեխային։ Բոլոր կոյր երեխաների երերից մէկը (գուցէ հէնց կէսը) այդ հիւանդութիւնից են կորցրել իրանց տեսողութիւնը։

Մննդեան հէնց առաջին կամ երկրորդ օրը (ամենառուշը 3-դ—4-դ օրը) կոպերի վրա ճպուռ է նկատվում, որը չորանում է գիշերն ու կոպերը իրար կպցնում։ Յետոյ կոպերը կարմրում են ներսից, ուռչում, հաստանում և ցաւոտ դառնում։ Այ երկու օրից յետոյ աչքերից սկսում է հոսել թանձր թարախ, որը հաւաքվում է կոպերի տակ, բարձրացնում նրանց, ուռցնում, գնդակածել դարձնում։ Աւելորդ թարախը, որը չի տեղաւորվում կոպերի տակ, դուրս է ծորում ու ինում թշերի վրա։

Պատճառը.—Լաւ հասկանանք, թէ ինչից է առաջանում այս սարսափելի հիւանդութիւնը։

Այս մի վարակիչ հիւանդութիւն է և պատահում է, երբ սեռական գործարանների վրա սուսունակ հիւանդութիւնը կայ^{*)}): Վարակումն կատարվում է ծննդեան երկունքի միջոցին. երբ երկունքը դժուար է եղել ու երկար տեւել.—այս դէպքում երեխայի գլուխն արդէն դուրս է եկած և աչքերը կիսաբաց են, ու մօր ծննդեան գործարաններից մի կաթիլ լորձունք կամ մի կաթիլ սուսանակային թարտի է ընկնում աչքը:

Աչքերի բորբոքումն կարող է երեխայի մի աչքից միւսն անցնել և հիւանդ երեխայից—առողջին:

Ասածներիցս պարզ է, որ ամենից առաջ ծննդկանը պէտք է ուշ գարձնի իր ծննդական գործարանների մաքրութեան վրա և ծնունդի ժամանակ լաւ մաքրուր (եփ տուած ու սառեցրած) ջրով լուանայ ու մաքրուր շորով էլ չորս էլ չորս այնիւ Միւս զդուշութիւնն այն է, որ եթէ տան մէջ մի երեխայ աչքացաւ ունի,

^{*)} ՏԵՇ իւ Ծիթիլիս, Կակուղ շանկը և Սուսունակ գիրքը:

պէտք է զգոյշ լինել, որ միւսներն էլ չկարակուեն: Դրա համար հիւանդին չպէտք է թոյլ տալ, որ միւս երեխաների հետ միասին քնի, խաղայ: Մէկ էլ հիւանդի աչքի սրբիները պէտք է առանձին պահուեն ու առանձին լուացուեն:

Երեխայի ծննդեան րոպէին իսկոյն գոյլ ջրով կամ բորակային թթւուտով (մի գոյլ բորաթթւուտ հալեցրէք մի բաժակ տաք ջրի մէջ) երեխայի աչքերը լուացէք: Քաղաքներում (կամ օրտեղ գեղատուն կայ) խորհուրդ ենք տալիս իսկոյն նորածնի աչքերի մէջ կաթացնել մի-մի կաթիլ դժոխաքարի (լապիսի) 20/0-ային լուծուածքը: Երբ բորբոքումն արգէն սկսուած է, պէտք է անպատճառ բժշկին գիւմել, իսկ եթէ տեղում բժիշկ չկայ, պէտք է աչքերի վրա սառցափաթեթ դնել (քաթանի կտորը միքանի անգամ ծալած և սառը ջրում թաթախած), օրական 5—6 անգամ կոպերը շուռ տալ ու լուանալ բորակային թթւուտի խառնուրդով, նոյնպէս կաթեցնել օրական մէկ (սաստիկ բազեկային կոմիսակ երկու) անգամ յիշած դժոխաքարի բոլորութեամբ:

7/3 1922

Հ. ԱՅԱՍՏԻ ՀԱՆԻԿԻՐԵԱ
ԱՅԱՍՏԻ ՀԱՆԻԿԻՐԵԱ

Դ

ՆՈՐԱԾՆԻ ԴԵՎԱՍԻԹԻՒԽՆԵՐ

Յաճախ ծննդեան հէնց առաջին օրերը
երեխայի մաշկը դեղին գոյն է ստանում։
Դեղնութիւնը երբեմն միայն գէմքի և կրծքի
վրա է երեւում, իսկ ծանր գէպքերում
տարածվում է նաև մարմնի վրա և աչքերի
սպիտակուցն էլ դեղնում է։

Այս երեւոյթը շատ երեխաների վրա
է նկատվում (100-ից—80-ի վրա) և ընդ-
հանրապէս անցնում է 5—7 օրից յետոյ ու
վատ հետեւանքներ չի թողնում։ Բայց երբեմն
դեղնութիւնը չի անցնում։ Այս գէպ-
քում հիւանդութիւնը կարող է վատնդ ըս-
պառնալ հիւանդին։ Երեխան չերմում է,
զարկերակը սաստիկ արագանում, արտա-
թօրութիւններն անգոյն են լինում, իսկ
մէզը ընդհակառակը սաստիկ մուգ։

Այս վերջին ձեւի դեղնութիւնը սաս-
տիկ երկիւղալի մի հիւանդութիւն է, որից
յաճախ մեռնում են երեխաները։ Այս պատ-
ճառով անհրաժեշտ է միշտ դիմել բժշկին։
Տնային խնամքը կայանում է նրանում, որ երե-

ՆՈՐԱԾԻՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԻՒԱՆԳՈՒԹԻՄ. 19

խաներին մի թէյի գդալ ձէթ են տափս,
շաքարաջուր կամ' բաց թէյ են խմացնում։

Ե

ՊՈՐՏԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԵՐԸ

ա. Բորբոքումն.—Երբ պորտը ընկնե-
լուց յետոյ վէրքը կեղտոտ են պահում,
նա բորբոքվում է. պորտի վէրքը չի չո-
րանում, այս սկսում է ծածկուել թա-
րախով, եղբերը (զրադները) կարմրում են,
ուռչում և երեխան սկսում է ջերմել։ Այս
մի չափազանց վտանգաւոր բան է, որի ա-
ռաջը պէտք է իսկոյն առնել, թէ չէ բոր-
բոքում գնալով կը սաստկանայ և կարող է
պորտի շուրջը կարմիր բամի դառնալ, ո-
րից երեխան կարող է մեռնել։

Եթէ բժիշկ կայ, եփ տուած ջրով և
ախտահանած (եփ տուած ու չորացրած)
բամբակով*) կամ մի բարակ շորով լաւ մա-
ստիկ բամբակի մաքրակը պատրաստում են այս-
պէս։ Կերցնում են լա զզած բալորովին մաքուր փա-
փուկ բամբակ ու մի ժամ եռացնում են հասարակ ջրի մէջ
և փառում մի մաքուր շորի վրա ու դնում գուրսը մաքուր օ-
դի մէջ, մինչեւ որ չորանայ, նթէ արև կայ, արևի տակ
պէտք է դնել,

*) Ախտահանած բամբակը պատրաստում են այս-
պէս։ Կերցնում են լա զզած բալորովին մաքուր փա-
փուկ բամբակ ու մի ժամ եռացնում են հասարակ ջրի մէջ
և փառում մի մաքուր շորի վրա ու դնում գուրսը մաքուր օ-
դի մէջ, մինչեւ որ չորանայ, նթէ արև կայ, արևի տակ
պէտք է դնել,

բուր լուացէք վէրքը և վրան տաքացնող փաթեթ դրէք։ Աւելի լաւ է, ի հարկէ, բորակային թթւուտի խառնուրդով լուանալ վէրքը (մի թէլի գդալ մի բաժակ ջրի մէջ), յետոյ փաթեթի բաթանը նոյնպէս պէտք է թրջել այդ խառնուրդի մէջ։ Այս փաթեթները նորոգել 3—4 ժամը մի անգամ։ Հատ լաւ է նոյնպէս օղիով (արազ) լուանալը։ Մի բարակ շոր պէտք է թաթախել արազի մէջ ու լուանալ վէրքը, յետոյ այդպիսի մի շոր էլ արազի մէջ թրջել ու կապած պահել վէրքի վրա։ Եթէ այս չի օգնի, այն ժամանակ պէտք է դիմել բժշկին։

Երբեմն, էլի կեղտոտութիւնից, պորտատեզում աւելորդ մներ են առաջ գալիս։ Այս մի երկիւղալի բան չէ, բայց պէտք է բժշկի խորհրդին դիմել և ոչ թէ կեղտոտ մկրատներով կտրել։

բ. Արիւնահոտութիւն պորտից.—Երբեմն, եթէ պորտի կապը թոյլ է, կարող է արիւնհոտութիւն պատահել։ Եթէ տեսնում էք, որ կապը թոյլ է, նորից աւելի ամուր կապեցէք պորտը (պէտք է կապել նեղ ժապաւէնով (շնուրօկ) և ոչ թէ թելով, որովհետեւ թել կտրում է)։ Երբեմն էլ արիւնհոտութիւնը

ՆՈՐԱԾԻՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ, 21

պատահումէ պորտն ընկնելուց յետոյ յէտ (Երբէք չպէտք է զօռով պոկել պորտը, այլ սպասել, որ ինքն իրան ընկնի, թէ չէ արիւն կը գայ)։ Այդպիսի գէպերում պէտք է մաքուր, աղտահանած բամբակի գնդիկներ դնել վէրքի վրա և երկար ժամանակ մատով հուպ տալ։ Մի ժամից յետոյ արիւնը եթէ չկանգնի, կարելի է վէրքի վրա շիբ ցանել։ Բայց երբէք չորով չկապէք ու թողնեք-գնաք, որովհետեւ ձեր բացակայութեան ժամանակ, շորիտակից կարող է արիւն դնալ և երեխան արնաբամ կը լինի։

գ. Պորտի աղեթափումն։—Այդ-պորտի ծակով աղիքների դուրս դալն է։ Պորտի կաշին ձգվում է և մի ուռուցք է կազմում։ Նա գոյանում է ծննդից միքանի շաբաթ յետոյ և առհասարակ այնպիսի երեխաների վրա, որոնք շատ են լաց լինում ու ճշում են։ Հազալիս աղիքները սեղմկում են փոլում, լայնացնում են պորտի ողը և դուրս ցցվում։ Եթէ այդ ժամանակ կամաց սեղմենք ուռուցքը, կը զգանք, որ ներս է գընում և կամաց-կամաց անհետանում։—աղիքները նորից լցվում են փորի մէջ։ Այն ժա-

մանակ շատ հեշտ է մատով շօշափել պորտի ծակը, որի մէջ կարող է մատը մտնել: Այս աղեթափումն շատ երկիւզալին է, որովհետև աղիքները կարող են այլևս ներս չդնալ ու սեղմուել: Ուրեմն պորտը ընկանելուց յետոյ պիտի զգուշանալ, որ երեխան ճշեր չարձակի, որ լաց չինի և ստամոքսը կանոնաւոր լինի, որովհետեւ ճիգեր անելիս երեխան սեղմում է աղիքները, որոնք կարող են գուրս պրծնել պորտի տեղից, քանի գեռ լաւ չի փակուել:

Եթէ աղեթափութիւնն արդէն գոյացել է, պիտի կամաց սեղմելով ներս լլցնել աղիքը, յետոյ ծակի վրա բինդ դնել—կապել: Գլխաւորն այս կապն է:

Բինդը 2-3 վերշոկ լայնութեան մի կապ է, որի վրա կարած է բամբակից մի փոքրիկ (պորտի ծակից միքիչ մեծ) բարձիկ: Այս բարձիկը կը սեղմի ծակը և չի թոյլ տայ, որ աղիքը գուրս պրծնի: Բարձիկը կարելի է շինել մի հինգ կոպէկանոցից, որը պէտք է փաթաթել բամբակի ու շորի մէջ և կարել կապից: Կապը պէտք է պահել մինչև որ ծակը ծածկուի: Դեղատներում պատրաստի կապոցներ են ծախում:

Զ

ԾԻԾԻԿՆԵՐԻ ԲՈՐԲՈՔՈՒՄՆ

Նորածնի ծիծիկները կարող են բորբոքուել ու թարախակոյտ դառնալ: Ակզեռում, երբ քիչ ուռած են ու կոշտացած, բամբակ պէտք է դնել ու կապել, զգուշանալով, որ կուրծքը չսեղմուի, իսկ եթէ արդէն թարախ է գոյացել, հարկաւոր է տաք փաթեթ դնել:

Է

ԾՆՕՏՆԵՐԻ ԿԾԿՈՒՄՆ ԵՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՐԿԱՄՈՒԹԻՒՆ

Յանկարծ նորածին երեխայի ծնօտի մկանները սաստիկ կծկվում են և ծնօտները իրար կպչում, այնպէս որ բերանը բանալ անկարելի է: Այս կծկումն տարածվում է վզի, կրծքի, թևերի և ուրիշ մկանների վրա, այնպէս որ երեխան ուղղակի փայտանում է:

Հեականքն ընդհանրապէս լինում է մահ:

Պատճառը, ինչպէս ապացուացուածէ, արեան թունաւորումնէ: Թոյնը մանոււմ է արեան մէջ պորտի վէրքից, եթէնակեղտուտէ պահուած:

Այստեղից հետեւում է, որ այս սոսկալի, մահացու հիւանդութիւնից երեխային պաշտպանելու համար պէտք է մաքուր պահել պորտի վէրքը:

Հէնց որ նկատէք, որ երեխայի ծնօտները իրար են կպել ու չեն բացգում, իսկոյն բժշկի դիմեցէք. իսկ մինչև նրա դալը, վերցրէք մի թաշկինակ կամ մի սպունդ, թաթախէք տար (40⁰) ջրի մէջ և շուտ-շուտ դրէք ծոծրակին ու ողնաշարին, կամ հիւանդին նստացրէք տաք լողարանի մէջ:

Ը

ԲՇՏԻԿԱՅԻՆ ՑԱՅԸ (պեմֆիզուս)

Լինում է հասարակ կամսիփիլիսային (ժառանգական սիֆիլիս): Հասարակ ձեզ այն է, որ մարմնի վրա երեւում են կարմիր կէտեր, որոնք 2—3 օրից յետոյ դառնում են բշտիկներ, այսինքն փոքրիկ թափանցիկ պղուկ-

ներ, որոնք լցուած են սպիտակ կամ դեղնաւուն հեղուկով: Միքանի օր էլ անց, նրանք ձակվում են, դատարկվում, մաշկը կնծովում է և դոյանում են փոքրիկ վէրքեր, որոնք շուտով էլ առողջանում են: Երբեմն ամբողջ մարմինը ծածկուած է լինում այդպիսի բշտիկներով: Բայց բոլորը միանդամից չեն դուրս տալիս, այլ հետքահետէ. հիւանդութիւնը տեսում է 7-ից մինչեւ 12 օր:

Մինչեւ բժշկի գալը, հիւանդին դրէք տաք լողարանի (վաննայի) մէջ, տուէք լուծողական. իսկ եթէ բշտիկները մեծ են, ծակեցէք մաքուր ասեղով ու վրան բորային խառնուրդով մաքուր շոր դրէք: Շատ լաւ է նոյնպէս օրական մի-երկու անգամ վաննա դնել:

Միթիլիսական պեմֆիզուսը տարածուած է լինում ամբողջ մարմնի վրա, նոյնիսկ ձեռների ափերում և ոտերի տակ: Այս հիւանդութիւնը հետեւանք է ծնողների հիւանդ դրութեանը (ծնողները սիֆիլիս կամ վատ ցաւ պէտք է ունեցած լինեն): Դրա բժշկութիւնը միայն բժշկը կարող է լաւ անել:

թ.

ԱՐՆԱՓՍԽՈՒՄՆ ԵՒ ԱՐՆԱԼՈՒԾՈՒՄՆ

Երբեմն հէնց ծննդեան առաջին օրերը նորածինները արիւնհոսութիւն են ունենում բերանից ու ետքից։ Երբեմն երեխան փրսխում է այն արիւնը, որը նա կուլ է տուած եղել հէնց մօր արգանդում։ Փոխումն անվնաս է, նոյնիսկ օդատակտ է, որովհետեւ ստամոքսը դատարկվում է։ Այսպիսի արիւնահոսութիւնը չի նուազեցնում երեխային և շուտով դադարում է։ Իսկական արնալուծութիւնը և արնափսխումն շատ արագ ուժասպառ են անում երեխային։ Սա գունատվում է, մարմինը սառչում է, կապոյտ գոյն ստանում, սիրտը շատ թոյլ է բարախում, զարկերակը հազիւ նշմարելի դառնում է։ Այս մի շատ ծանր հիւանդութիւն է, որից երեխան արնաբամ է լինում ու մէկ կամ միքանի օրուայ մէջ հանգում։

Հէնց որ արիւնահոսութիւն նկատուի, պէտք է շշերի կամ ըլտուղների մէջ եռման ջուր լցնէք, շորերի մէջ փաթաթէք ու դընէք երեխայի շուրջը վերմակի տակ։ Մեր

ժողովրդի մէջ մարմինը տաքացնելու համար շատ են գործ ածվում տաքացրած խուփի, ագուռ ևայլն։ Միւնոյն ժամանակ հարկաւոր է երեխայի ձեռներն ու ոտերը շփել—տաքացնել։

Որանք են նորածին երեխային հարուածող գլխաւոր հիւանդութիւնները։ Ասենք մէկ անգամ էլ, որ միշտ պէտք է բժշկի գիմել իսկ մեր խորհուրդը գնուր գները նրանց համար է, որ ոնք չեն կարող բժշկի գիմել։

Վ. Ե. Ռ. Զ.





ՀՀ Ազգային գրադարան



NL0267126

Հեղինակի միւս հրատարակութիւնները.

- 1) Ժանտախտ (մի քանի օրինակ միայն) 20 կ.,
- 2) Խօլեբայի մասին (ապառուած), 3) Խօլերա 5 կ.,
- 4) Հիմնոտիսմ, հատ. I. (մի քանի օրինակ միայն) 25 կ., 5) Հիմնոտիսմ, հատ. II. 15 կ., 6) Դադոցական առողջապահութիւն (պատկերազարդ) 50 կ.,
- 7) Առաղջ երեխաների խնամատարութիւն 25 կ.,
- 8) Սրբիլիս, Կակուղ շանկը, Սուսոնակ 25 կ.,
- 9) Թշուառների բարեկամ բժիշկ Հատող 20 կ.,
- 10) Ամուսնութիւն 75 կ.

ԲԺՇՔԻ ԶՈՒՅՑՆԵՐԻ

- | | |
|------|--|
| № 1. | Մի' ԽՄիթ, երկ. տար. (նկարներով) 5 կ. |
| № 2. | ՎԱՏ ՑԱԿ (նկ.) 6 կ. |
| № 3. | ՎԱՐԱԿԻՉ ՀԻՒԱՆԻՇԻՐԻ ԽՈՎԵՐԸ
եր ՆՄԱՆՑ ԹՈՅԵՐ 25 նկ. 15 կ. |
| № 4. | ԹՈՅԵՐՈՑ ԿՈՄ ՇԱՀԱԿԱՌՈՒ (նկ.) 10 կ. |
| № 5. | ԳԱՂԵՐՈՅՑ ԿՈՄ ՄԵԼԱՌԻՍ. (նկ.) 5 կ. |
| № 6. | ԽԵՖՈՒԵՆՑԱՅ ԿՈՄ ՆՈՐ ՑՈՒ (նկ.) 3 կ. |
| № 7. | Մ' Ի ՆԻԹԻ 6 կ. |
| № 8. | ՆՈՐԱԿՄԻՆ, ՄԱՆՈՒՍԻԿԱՆԵՐԻ ՀԻՒԱՆ. |
| | ԴՐԻԹԻՒՆԵՐԸ (նկ.) 5 կ. |

Պատրասիւմնեա 1. Ծաղիկը և ծաղիկ կարելի, 2. Քութէչ կամ Յեղարատինատ, 3. Դիփուերիտ, 4. Խնչէ մրսելը, 5. Խնչէ երազը, 6. Կարմրուկ, 7. Խնամեցէր ձեր մանուկների աշքերն ու ականջները, 8. Պատահական ցաւերն ու հիւանդութիւնները, և նրանց բժշկութիւնը, 9. Պատահիների սիստները:

Ծախվում են Կենդրոնական և գրավաճառանոցներում, նոյնպէս և հ

Հեղինակի հոգէն, Պաֆլուս, Ճ-ը

613, 95

14 - 88